ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
«Մարդու իրավունքների խախտումները էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ»
ԶԵԿՈՒՅՑ

2015 թ. հունիսի 19-ին Ազատության հրապարակում մեկնարկեց «Ո՛չ թալանին» նախաձեռնության՝ էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված ակցիան, որի պահանջն էր չեղյալ հայտարարել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ էլեկտրաէներգիայի սակագինը 6.93 դամով բարձրացնելու մասին 2015 թ. հունիսի 17-ի որոշումը: Նախատեսված երթի փոխարեն սկսվեց նստացույց՝ ոստիկանների հնարավոր բախումներից խուսափելու համար (ոստիկանները տարածք էին բերել ջրցան մեքենաներ): «Ո՛չ թալանին» նախաձեռնության անդամները հայտարարեցին, որ իրենք մինչև երկուշաբթի օրը ժամը 19:00-ն նստացույց են անցկացնելու, իսկ եթե իրենց պահանջը չբավարարվի, նրանք երկուշաբթի օրը երթով կշարժվեն դեպի Բաղրամյան 26՝ նախագահի նստավայր և այնտեղ կներկայացնեն իրենց պահանջները: Ոստիկանները նախ հայտարարեցին, որ ժամը 23-ից հետո նստացույցը արտոնված չէ, սակայն կազմակերպիչների հետ բանակցություններից հետո թույլատրեցին շարունակել նստացույցը՝ տարածքը չախտոտելու և վրաններ չտեղադրելու պայմանով:

2015 թ. հունիսի 22-ի երեկոյան՝ ժամը 19:00-ին, ցուցարարները շարժվեցին դեպի նախագահական նստավայր: Հավաքի սկզբին կազմակերպիչները մի քանի անգամ հայտարարեցին, որ հավաքը կրում է բացարձակապես խաղաղ բնույթ և ներկայացրեցին իրավական հիմնավորումներ խաղաղ հավաքի անցկացման վերաբերյալ: Հավաքի մասնակիցները Ազատության հրապարակից երթով շարժվեցին դեպի Բաղրամյան պողոտա: Երթին մասնակցում էին 4000-5000 մարդ: Հավաքի մասնակիցները երգում էին հայրենասիրական երգեր և պարում էին ազգագրական պարեր, նրանց մոտ կային երաժշտական գործիքներ: Ցուցարարները ծածանում էին Հայաստանի և Եվրոմիության դրոշները, կրում էին պաստառներ՝ տարբեր կարգախոսերով: Բաղրամյան պողոտայի սկզբնամասում մոտ 200 ոստիկաններ փակել էին ցուցարարների ճանապարհը: Ոստիկաններն ունեին զրահներ, սաղավարտներ և վահաններ: Բաղրամյան պողոտայում ոստիկանների թիկունքում կային ջրցան մեքենաներ և փշալարեր: Հանդիպելով ոստիկանների պատնեշին, հավաքի մասնակիցները պողոտայի մեջտեղում նստեցին գետնին:

Ժամը 22:00-ի սահմաններում ոստիկանները հայտարարեցին, որ ՀՀ նախագահը առաջարկել է բանակցել ցուցարարների 4-5 հոգանոց պատվիրակության հետ, սակայն հավաքի մասնակիցները մերժեցին առաջարկը: Հավաքը անցնում էր խաղաղ պայմաններում: Ժամը 23:00-ի սահմաններում հավաքի մասնակիցները դադարեցրին երաժշտությունը և բարձր աղմուկը: Ժամը 24:00-ի սահմաններում Բաղրամյան պողոտա ժամանեցին սև հագուստով դիմակավորված ոստիկաններ: Գիշերը ժամը 01:00-ին անջատվեցին Բաղրամյան պողոտայի լույսերը: Մասնակիցների թիվը մինչև առավոտյան ժամը 05:00-ն կազմում էր 500-800 մարդ:

Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը հունիսի 23-ին ժամը 5:20-ին հայտարարեց, որ նստացույցի մասնակիցների գործողություններն ապօրինի են: Հերթական նախազգուշացումից և ցուցարարներին 10 րոպե ժամանակ տրամադրելուց հետո՝

ոստիկանները սկսեցին ցույցը ցրել ջրցան մեքենաներով[1]:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից 2015 թ. հունիսի 22-23-ին կատարվել է ցույցի դիտարկում, որի վերաբերյալ պատրաստված զեկույցում մանրամասն ներակայացվել են ոստիկանության գործողությունները խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ: Ստորև ներկայացվում է մեջբերում զեկույցից. «…Մասնակիցների մի զգալի մասը շարքերով նստած էր ոստիկանության տողանից մոտ 10 մետր հեռավորության վրա: Պահանջը ներկայացնելուց հետո, ոստիկանները սեղմեցին տողանները հատուկ դասավորվածությամբ (հրեշտակների խումբը պարեկային ծառայության ետևից, ներքին զորքերը ջրցան մեքենայի շուրջ մեջտեղում և հատուկ նշանակության վաշտը /ՀՆՎ/՝ մեքենայի ետևից և 40-50 քաղաքացիական հագուստով ոստիկաններ՝ ոմանք տարբերակիչ նշաններով, երկու եզրերից շրջափակեցին հավաքի մասնակիցներին: Ջրցան մեքենան երկու շիթերով ջրի հոսքն ուղղեց անմիջապես հավաքի կենտրոնում նստած մասնակիցների վրա և մյուս զորամիավորումների հետ սկսեցին առաջ գնալ: Երբ ոստիկանների և մասնակիցների հեռավորությունը հասավ մոտ 5 մետրի, ներքին զորքերի գլխավորությամբ նաև մյուս ստորաբաժանումները հարձակվեցին մասնակիցների վրա և սկսեցին բերման ենթարկել, չնայած վերջիններս փորձում էին մնալ նույն տեղերում: Բերման ենթարկելը հաճախ ուղեկցվում էր վահանի և մահակի հարվածներով, մարդկանց գետնին ուժգին գցելով, նրանց բազուկով խեղդելով, որոնք հիմնականում կատարվում էր 4-5 հոգանոց խմբերով: Դիտարկվեցին դեպքեր, երբ ընկած ցուցարարներին մահակով հարվածում էին և հրում տարբեր պինդ առարկաների ուղղությամբ (ցանկապատի, սյուների, պատերի): Երբ ոստիկանության ծառայողները հասան Բաղրամյան–Սարյան փողոցների խաչմերուկ, սկսեցին վազքով հետապնդել փախչող ցուցարարներին՝ բոլոր ուղղություններով՝ ընդհուպ մինչև Մոսկովյան փողոց և Հյուսիսային պողոտա: Ազատության հրապարակում, Օպերայի շենքի դիմացի բեմահարթակից, ոստիկանները հավաքի տասնյակ մասնակիցների կոպտորեն քաշելով ուղղակի ցած էին գցում աստիճաններից ներքև …»[2]:

Բաղրամյան պողոտայում նստացույցը ցրելու ընթացքում բռնի ուժի գործադրմամբ բաժիններ են տարվել 237 խաղաղ ցուցարար[3], որոնց մոտ կեսը՝ 106 հոգի, տեղափոխվել է Երևանի Նարկոլոգիական կենտրոն՝ ալկոհոլի և թմրամիջոցների հայտնաբերման փորձաքննության ենթարկվելու: Կենտրոնի տնօրեն Պետրոս Սեմիրջյանն «Ազատություն» ռադիոկայանին փոխանցել է, որ 44 ցուցարար անցել է և՛ ալկոհոլի, և՛ թմրամիջոցների բացահայտման փորձաքննություն, 48-ը՝ միայն թմրամիջոցի, 14-ը՝ ալկոհոլի[4]:

Ցույցի մասնակիցները անօրինական կարգով զրկվել են ազատությունից, նրանք հարցաքննվել են վկայի կարգավիճակով՝ անազատության մեջ պահվելով 4 ժամից ավելի:

Բերման ենթարկված հանրահավաքի մասնակիցներից անմիջապես առգրավվել են բջջային հեռախոսները, վերջիններս ենթարկվել են անձնական խուզարկության[5]:

---

[1] Armenian protests: Thousands rally against energy price hike, http://www.bbc.com/news/world-middle-east-33238070

[2] 2015թ. հունիսի 22-ին էլեկտրաէներգիայի թանկացման դեմ տեղի ունեցած հավաք-երթի զեկույց, http://armhels.com/2015/06/23/hunisi-22in-elektraenergiayi-tankacman-dem-teghi0unecats-havak-ert/

[3] Electricity Protest: Unprecedented Number of Citizens Detained, http://civilnet.am/2015/06/23/electricity-protest-unprecedented-number-of-citizens-detained/#.VYftD_ntmkp

[4] Փորձաքննություն անցած ցուցարարների մոտ ալկոհոլի պարունակություն չի հայտնաբերվել, http://www.azatutyun.am/archive/news/20150624/2031/2031.html?id=27090602

Սույն զեկույցում նշված ոստիկանության աշխատակիցների կողմից խախտված իրավունքների ցանկը սպառիչ չէ:

[5] Ամենայն հավանականությամբ կատարվել է հեռախոսների զննություն՝ հետևաբար տեղի է ունեցել միջամտություն անձնական կյանքին

Ոստիկանության աշխատակիցների կողմից խաղաղ ցույց իրականացնող ՀՀ քաղաքացիների նկատմամբ կիրառվել է անհամաչափ ուժ, որի արդյունքում ըստ Առողջապահության նախարարության կողմից տարածված տեղեկատվության հունիսի 23-ին՝ լուսաբացին, շտապօգնության ծառայություն է դիմել 25 անձ, 15 անձ հիվանդանոց է տեղափոխվել տարբեր մարմնական վնասվածքներով[6]:

Ոստիկանության զորքերի հրամանատար, փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանի[7] և այլ բարձրաստիճան ոստիկանների հատուկ հրահանգով դաժան բռնության և ծեծի են ենթարկվել նաև լրատվական միջոցների մի շարք ներկայացուցիչներ:

Մասնավորապես գրանցվել են հետևյալ դեպքերը[8].

- դաժան բռնության և ծեծի են ենթարկվել www.1in.am-ի օպերատորներ Կարեն Չիլինգարյանը, Հովսեփ Հովսեփյանը և Գոռ Հովհաննիսյանը, շարքից հանվել են վերջինիս աշխատանքային թվային տեսախցիկն ու ուղիղ եթերի սարքը
- «Գալա» հեռուստաընկերության լրագրող Փայլակ Ֆահրադյանը ոստիկանների հարվածներից վնասվածքներ է ստացել ձեռքերի ու պարանոցի շրջանում, նա բռնի կերպով բերման է ենթարկվել
- Epress.am-ի օպերատոր Տիգրան Հակոբյանը մահակով հարված է ստացել գլխին, որից հետո բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնի բաժին, իսկ օպերատոր Տիգրան Խաչատրյանին հայհոյել են և քաշքշել՝ խլելով տեսախցիկը, Epress.am-ի երեք տեսանկարահանող սարքերը ջարդվել են
- iLur.am-ի թղթակից Հակոբ Կարապետյանը բերման է ենթարկվել, նրանից վերցրել են ֆոտոխցիկը, հանել հիշողության քարտը և վերադարձրել
- բերման է ենթարկվել նաև NEWS.am-ի ֆոտոլրագրող Արսեն Սարգսյանը, թղթակից Աիդա Հովհաննիսյանի ձեռքից ուժով քաշել և տարել են տեսախցիկը
- «Հետքի» լրագրողներ Անի Հովհաննիսյանը և Հրանտ Գալստյանը բերման են ենթարկվել Կենտրոն բաժանմունք
- ջարդվել է «Ազատություն» ռադիոկայանի տեսախցիկներից մեկը, ինչպես նաև լրագրողի հեռախոսը, որով վերջինս փորձում էր տեսանկարահանում իրականացնել, իսկ ոստիկանության Նոր-Նորքի բաժնում սպան հրելով շենքից դուրս է հանել «Ազատություն» ռադիոկայանի նկարահանող խմբին

2015 թ. հունիսի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության հայտարարության համաձայն 2015 թվականի հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը՝ սկսած ժամը 19.30-ից տևական ժամանակ մի խումբ անձինք, անօրինական հավաք, երթ, ապա նաև նստացույց կազմակերպելով Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում խախտել են հասարակական կարգը: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով՝ խուլիգանության հանցակազմի հատկանիշներով: 2015 թ. հունիսի 22-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ նախաքննություն կատարելու համար: Ոստիկանության կողմից բերման ենթարկված անձանցից ՀՀ քննչական կոմիտեի քննիչների կողմից հարցաքննվել է շուրջ 40 անձ, մի շարք անձանց հարցաքննություններ ընթացքի մեջ են: Նշանակվել են դատաբժշկական, նյութագիտական և քրեագիտական

[6] Նոր տվյալներ ակցիայի ժամանակ վնասվածքներ ստացածների մասին. http://replik.am/arm/index.php?id=61784

[7] ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, փոխոստիկանապետ

[8] Ոստիկանները և «կլիր կա վրետ» հայհոյանքը. http://www.epress.am/2015/06/23/ոստիկանները-և-«կլիր-կա-վրետ»-հայհոյան.html

փորձաքննություններ: Նույն հայտարարության մեջ նշվում է, որ 2015 թ. հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած դեպքերի մասնակիցների ստացած մարմնական վնասվածքների հանգամանքները պարզելու նպատակով, զանգվածային լրատվամիջոցների էլեկտրոնային կայքէջերից զննվել և հարուցված քրեական գործի նյութերին են կցվել մի շարք հրապարակումներ և դեպքերի վերաբերյալ տեսաձայնագրություններ:

Մի դեպքում դատախազությունը խաղաղ ցուցարարների նկատմամբ հարուցում է քրեական գործ խուլիգանության հանցակազմի հատկանիշներով, մյուս դեպքում՝ երբ առկա են փաստեր խաղաղ ցուցարարների նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործ չի հարուցվել:

Հավաքը դադարեցնելու, մասնակիցներին բերման ենթարկելու և դրան հաջորդող գործընթացներն ուղեկցվել են հետևյալ խախտումներով.

1. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են գործադրել՝ ջրանետեր և զրահամեքենաներ: Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի) (…), ինչպես նաև խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ:

<u>Սույն պարագայում հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները չեն եղել պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Ոստիկանության կողմից ջրանետ մեքենաների, որպես հատուկ միջոց կիրառումը եղել է անհամաչափ: Ջրանետ մեքենաները կիրառվել են 300-400 խաղաղ ցուցարարի նկատմամբ, բազմաթիվ ցուցարարներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:</u>

2. Նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ, բացառիկ դեպքերում, հատուկ անհրաժեշտության կապակցությամբ ՀՀ օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձերբակալման այլ ժամկետներ: Ցուցարարների ազատությունը սահմանափակվել է նախատեսված 3 ժամից ավելին՝ առանց դատավարական կարգավիճակ սահմանելու:

3. Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը իրավունք ունի՝առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

Բերման ենթարկված անձանց մեծ մասը չի կարողացել օգտվել փաստաբանի ծառայություններից ոստիկանության կողմից ստեղծված խոչընդոտների պատճառով իսկ ոստիկանություն այցելած փաստաբանները չեն կարողացել մուտք գործել ոստիկանություն տնական ժամանակ:

5. Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ մարդկանց փրկելու և առաջին բժշկական օգնություն ցույց տալու: Ոստիկանությունը ոչ միայն առաջին բժշկական օգնություն ցույց չի տվել վիրավորներին, այլև ինքն է պատճառ հանդիսացել այդ վիճակի: ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման 22-րդ կետի համաձայն՝ ծառայողները ծառայությունը կատարում են սահմանված ձևի համազգեստով:

Տվյալ պարագայում մի քանի տասնյակ ոստիկան ծառայությունը կատարել է առանց համազգեստի, ուստի իրավունք չեն ունեցել բերման ենթարկել ցուցարարներին:

6. Համաձայն՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»:

Ավելին՝ ՀՀ Կառավարության 14 հունիսի 2007 թվականի N 818-Ն որոշմամբ Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին որոշման N 1 հավելվածի 1-ին մասի 1 կետի համաձայն՝ մարդն իրավունք ունի սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը: Համաձայն՝ նույն որոշման N 2 հավելվածի 2-րդ մասի մարդու իրավունքը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը:

Սույն պարագայում ՀՀ ոստիկանության աշխատակիցներից մի մասը բացի այն որ չեն եղել ոստիկանական համազգեստով նաև չեն ներկայացել և չեն ներկայացրել բերման ենթարկվողներին այն պատճառները և հիմքերը որի համար վերջիններս բերման են ենթարկվել: Ավելին քաղաքացիական հագուստով ոստիկանները գտնվել են ցուցարարների շարքերում և ցույցը ցրելու գործողությունից ընդամենը րոպեներ առաջ են հագել թևկապերը, որը նպատակ է ունեցել նպատակային բռնություններ կիրառելու և բռնությունից խուսափելու:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի *քննության չներկայացող կասկածյալին,*

մեղադրյալին, ամբաստանյալին, (...) հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, (...):

Սույն պարագայում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից 237 անձ բերման է ենթարկվել վկայի կարգավիճակով, ովքեր առ հասարակ չեն ծանուցվել ներկայանալ ոստիկանություն:

8. ՀՀ զանգվածային լրատվության մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը: ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսում է քրեական պատասխանատվություն:

Ոստիկանության կարգապահական կանոնագրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ոստիկանության ծառայողը պարտավոր է իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ:

<u>Ոստիկանությունը խոչընդոտել է ԶԼՄ ներկայացուցիչների աշխատանքին և ուժ է կիրառել հավաքը լուսաբանող լրագրողների նկատմամբ:</u>

<u>Ոստիկանության որոշ ներկայացուցիչներ դրսևորել են ոչ վայելուչ և ոչ հարգալից վերաբերմունք ցույցի մասնակիցների և լրագրողների նկատմամբ՝ վերջիններիս հասցեին հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ:</u>

9. ՀՀ սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

<u>Հանրահավաքի մասնակիցներին բերման ենթարկելու անբողջ գործընթացը ի թիվս վկայակոչված խախտումների նաև հետապնդել է անձանց նվաստացնելու և պատժելու նպատակ:</u>

23.06.2015 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տարածել է ոստիկանության գործողությունները դատապարտող հայտարարություն: Կազմակերպությունը իրավաբական խորհրդատվություն է տրամադրել ոստիկանության նշված գործողություններից տուժած անձանց[9]: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներգրավված փաստաբաններ՝ Արտուր Հարությունյանը և Անահիտ Չիլինգարյանը (ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների ծրագրերի համակարգող) այցելել են ՀՀ Ոստիկանության Մալաթիայի և Նոր-Նորքի բաժիններ, բերման ենթարկված քաղաքացիներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով: Փաստաբանները

[9]Announcement of Helsinki Citizens' Assembly – Vanadzor. http://hcav.am/en/events/23-06-2015-4/
ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դատապարտում է 2015թ.հունիսի 22-ի գիշերը լույս 23-ի առավոտյան ոստիկանության անօրինական գործողությունները. http://hcav.am/events/23-06-2015-2/

փորձել են պարզել, թե ինչ քննչական գործողություններ են իրականացվել մինչ փաստաբանների ժամանումը, ինչ հիմքերով են քաղաքացիները պահվում ոստիկանության բաժիններում:

Ստորև ներկայացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փաստաբանների կողմից ՀՀ Ոստիկանության Մալաթիայի և Նոր-Նորքի բաժին կատարած այցերի հաշվետվությունը:

Այցելություն ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին

- Փաստաբանները ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին են ժամանել 14:30-ի սահմաններում: Բաժնում պահվել են 20-ից ավելի անձ: Անձինք ոստիկանություն էին բերվել առավոտյան 05:30-06:00-ի սահմաններում: Ըստ ոստիկանությունում պահվող անձանց՝ նրանք բերվել են Ոստիկանության բաժին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով սահմանված «Խուլիգանության» կատարման կասկածանքով, ինչի վերաբերյալ նաև կազմվել են արձանագրություններ: Ըստ նույն անձանց՝ նրանցից վերցրել են մատնահետքեր, նրանց մեծ մասի հեռախոսները առգրավվել են:
- Բաժնից քաղաքացիներին սկսել են ազատ արձակել 15:30-ից սկսած, ընդ որում քաղաքացիները պահվել են բաժնում անկախ այն հանգամանքից, թե մինչ այդ ինչ քննչական գործողություններ են կատարվել և արդյոք անհրաժեշտ է կատարել լրացուցիչ անհետաձգելի քննչական գործողություններ:
- Ա. Հարությունյանը և Ա. Չիլինգարյանը նաև հանդես են եկել որպես Տիգրան Հակոբյանի և Դավիթ Սելիմյանի փաստաբաններ և մասնակցել են Դ. Սելիմյանի հարցաքննությանը, Տ. Հակոբյանի հարցաքննությունը տեղի էր ունեցել մինչ փաստաբանների ժամանումը: Դ. Սելիմյանը հարցաքննվել է որպես վկա:

Վստահորդների՝ փստաբանների հետ հանդիպելու խոչընդոտները

- Հարկ է նշել որ փատաբաններին անմիջապես թույլ չեն տվել տեսակցել իրենց վստահորդների հետ: Ոստիկանության բաժնի հերթապահ մասում փաստաբաններին խորհրուրդ են տվել սկզբում խորհրդակցել «Պաշտպանի» գրասենյակի աշխատակիցների հետ, որոնք այդ պահին գտնվում էին բաժնի շենքի դիմաց, քանի որ նրանց հետ ոստիկանության բաժնում արդեն իսկ որոշակի պայմանավորվածություն է ձեռք բերվել: Այն հարցին, թե ինչ առնչություն ունեն ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչները անձանց փաստաբանների հետ տեսակցելու իրավունքի հետ, բաժնի հերթապահ մասի ծառայողները համառորեն հորդորել են փաստաբաններին քննարկել այդ հարցը ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչների հետ:
- Փաստաբանները փորձել են պարզել ՀՀ մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակի այնտեղ գտնվող աշխատակիցների հետ, թե ինչումն է խնդիրը, և ինչ պայմանավորվածության մասին է խոսք գնում: Պաշտպանի գրասենյակի աշխատակիցները նշել են, որ չգիտեն ինչի մասին է խոսք գնում: Վերջիններս փաստաբանների հետ միասին մուտք են գործել Ոստիկանության բաժին:
- Որոշ ժամանակ անց փաստաբաններին թույլ են տվել մուտք գործել այն սրահը, որտեղ պահվում էին բերման ենթարկված քաղաքացիները:

Անձանց ազատազրկումը

- Փաստաբանների այն հարցին, թե ինչ հիմքով են անձինք պահվում ոստիկանության բաժնում որևէ հստակ պատասխան չի տրվել: Քննչական կոմիտեի աշխատակիցները հայտնել են, որ անձանց ազատության սահմանափակման հետ նրանք առնչություն չունեն և անձինք պահվում են ոչ թե քննչական կոմիտեի կողմից այլ ոստիկանության կողմից, քննչական կոմիտեի քննիչները պատրաստված նյութերի հիման վրա իրականացնում են հարցաքննություն, և այլ քննչական

գործողություններ, հետ վերադարձնում անձանցից բռնագրավված իրերը (հեռախոսները):

- Ոստիկանության ծառայողները իրենց հերթին հայտնում էին, որ անձինք պահվում են, քանի որ դեռևս անհրաժեշտ է իրականացնել քննչական գործողություններ՝ հարցաքննություններ, վերադարձնել նրանց իրերը: Նշել են, որ ցուցմունքներ վերցնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև այն անձանց դեպքում, ովքեր արդեն իսկ տվել են ցուցմունք:
- Քննչական մարմնի և Ոստիկանության մարմնի հետ տարված երկարատև բանակցություններից հետո հնարավոր եղավ ապահովել անձանց ազատությունը: Ընդ որում ոստիկանության բաժնի ծառայողները որոշում կայացրեցին անձանց ազատել 4 հոգանոց խմբերով:

Այսպիսով քաղաքացիները պահվել էին ոստիկանության բաժնում մոտ 9 ժամ: Ոստիկանության բաժին նրանք բերվել են թրջված վիճակում:

ՀՀ Ոստիկանության Նոր-նորքի բաժին

Վստահորդների՝ փաստաբանների հետ տեսակցելու խոչընդոտները

- Փաստաբանները ՀՀ ոստիկանության Նոր-նորքի բաժին են ժամանել 17:30-ի սահմաններում, սակայն բաժնում պահվող իրենց վստահորդների հետ անմիջապես հանդիպել չի թույլատրվել: Հերթապահ մասում առաջարկել են սպասել, մինչև ճշտումներ կկատարեն:
- Ոստիկանության ծառայողների կողմից ճշտումներ կատարելու գործընթացը չափազանց երկար ժամանակ տևելու պատճառով փաստաբանները փորձել են ճշտել, թե որքան է տևելու քննիչի հետ կապ հաստատելու և ճշտումներ կատարելու գործընթացը, սակայն հերթապահ մասի ծառայողներից ստացել են ագրեսիվ պատասխան, նույնիսկ մեղադրվել են անհարգալից վերաբերմունք դրսևորելու մեջ:
- Փաստաբանները կապ են հաստատել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան քայլեր ձեռնարկելու արդյունքում նրանք հրավիրվել են ՀՀ ոստիկանության Նոր-նորքի բաժնի պետի տեղակալի մոտ, որն էլ ներկայացրել է ցույցը ցրելու արդյունքում բաժին բերված քաղաքացիների հետ կապված բաժնում տիրող իրավիճակը, հայտնել այն մասին, որ ՀՀ դատախազության կողմից քրեական գործ է հարուցվել 258-րդ (Խուլիգանության) հանցակազմի հիմքով, կազմավորվել է քննչական խումբ, քննչական խմբում ներգրավված են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի 3 քննիչներ:
- Ոստիկանության պետի տեղակալի հետ զրույցից հետո փաստաբաններին թույլ է տրվել հանդիպել քաղաքացիների հետ: Բաժնում պահվել են 50-60 քաղաքացի:
- Փաստաբանները այստեղ ևս իրավական խորհրդատվություն են տրամադրել բերման ենթարկված քաղաքացիներին: Նրանք ստանձնել են Արթուր Սուքիասյանի (Ա. Չիլինգարյան) և Տիգրան Գևորգյանի (Ա. Հարությունյան) պաշտպանությունը: Փաստաբանները մասնակցել են Ա. Սուքիասյանի և Տ. Գևորգյանի հարցաքննությանը: Ա. Սուքիասյանը և Տ. Գևորգյանը հարցաքննվել են որպես վկա՝ 18:00-19:00 սահմաններում:

Քաղաքացիների ազատության սահմանափակումը

- Ինչպես և ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում քաղաքացիներին պահելու դեպքում, այստեղ ևս պարզ չէր, թե ինչ հիմքով են անձինք պահվում բաժնում և ինչ հիմքով է սահմանափակված նրանց ազատությունը:
- Քաղաքացիները պահվում էին ՀՀ ոստիկանության Նոր-նորքի բաժնի տարածքում, հարցաքննության համար տարվում էին քննիչի աշխատասենյակ: Փաստացի՝ Քննչական կոմիտեի 3 քննիչ ցուցմունքներ են վերցրել 50-60 անձից: Այսպիսով, քաղաքացիները ժամեր շարունակ ստիպված են եղել սպասել հարցաքննվելու իրենց հերթին, ինչից հետո խումբ-խումբ տարվել են

ՀՀ հանրապետական նարկոլոգիական կլինիկա փորձաքննության:

Հաշվի առնելով, որ քաղաքացիների վերջին խումբը տարվել է Հանրապետական նարկոլոգիական կլինիկա 19:30՝ փաստացի քաղաքացիները 13 ժամից ավելի գտնվել են անազատության մեջ:

Բժշկական փորձաքննության ենթարկելը

- Նոր-նորքի բաժնում պահվող բոլոր քաղաքացիներին տեղափոխել են հանրապետկան նարկոլոգիական կլինիկա բժշկական փորձաքննություն անցնելու նպատակով:
- Միայն երկար բանակցություններից հետո քաղաքացիներին և փաստաբաններին հնարավորություն տրվեց ծանոթանալ որոշմանը, ինչից պարզ դարձավ, որ քաղաքացիները ուղարկվում են փորձաքննության՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նրանք բերման են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգքրի 258-րդ հոդվածով արգելված հանցագործության կատարման կասկածանքով:

Այսինքն՝ անձինք փորձաքննության են ուղարկվել որպես կասկածյալներ, սակայն մինչ այդ մեկ ժամ առաջ հարցաքննվել են որպես վկա: Որպես վկա հարցաքննվելուց հետո նրանք՝ որպես կասկածյալ ներգրավելու վերաբերյալ որոշման մասին չեն տեղեկացվել: